CALS-технологии (CALS – Contiguous Acquisition and Cycle Support) родились в США в 80-х годах. Предвестником этих технологий были идеи «безбумажной информатики» на основе электронного обмена данными, выдвинутые в начале 70-х годов академиком В.М.Глушковым. Они нашли воплощение в русле глобальной стратегии CALS, которая развивалась в США по линии Министерства обороны и оборонных отраслей промышленности. Целью была эффективная организация и интеграция обмена и управления данными при проектировании, производстве и логистической поддержке систем вооружений. В дальнейшем CALS-технологии стали успешно применяться в гражданских отраслях, позволив повысить эффективность использования компьютерных ресурсов предприятий на всех стадиях жизненного цикла разрабатываемой продукции.

В настоящее время CALS-технологиями охвачено более 80 стран, создана штаб-квартира – международный CALS-Конгресс в г.Орландо. США вложило в CALS-технологии несколько млрд.долл. Эти вложения дают большую отдачу, окупив затраты. Созданное в CALS-технологии изделие заведомо дешевле любого другого и имеет более высокие качественные характеристики. Система самостоятельно делает детализовку изделия, произведет оптимизационные расчеты, которые укажут, где и что экономичнее всего производить, выполнит размещение производства в пределах стран CALS-сообщества и осуществит контроль за изготовлением деталей и узлов, сборкой, испытанием, отладкой и доставкой потребителю изделия. К расчетному сроку она обеспечит профилактический ремонт изделия, а когда срок «жизни» закончится, сообщит о месте и способе утилизации.

На основании сказанного можно предложить, что в XXI веке возможности сокращения белорусскими предприятия конкурентных позиций оказываются в прямой зависимости от информационного

обеспечения процессов исследований, разработки, производства, эксплуатации, ремонта, утилизации современной техники различного назначения и совместимости отечественных технологий с международными стандартами.

Таблица 1.

Технико-экономический эффект от внедрения CALS-технологий в США

Виды работ	Направления повышения эффективности	Количественный результат, в % к действующему нормативу
Проектирование и инженерные работы	Сокращение: - времени проектирования; - разработки технологии производства; - затрат на изучение выполняемости.	50 30-50 15-40
Организация поставок	Сокращение: - количество ошибок при передаче данных; - времени планирования; - стоимости информации.	40 70 15-60
Производство	Сокращение: - производственных затрат; - повышение качества.	15-60 80
Эксплуатационная поддержка изделий	Сокращение: - времени изменения технической документации; - времени планирования поддержки; - стоимости технической документации	30 70 10-50

Кроме того, этот процесс ставит Беларусь перед прямой угрозой экономической изоляции, так как овладение CALS-технологиями становится главным условием делового партнерства, выбора поставщиков, проведения тендеров, заключения контрактов во многих и в первую очередь в высокотехнологичных отраслях.

Сегодня в белорусской промышленности отсутствует система интеграции информационных технологий, относящихся к отдельным

этапам жизненного цикла продукции (конструирование, разработка технологии, подготовка производства, планирование и диспетчирование производства и т.д.) Кроме того, на различных предприятиях применяются самые разные электронные технологии описания изделий на одном и том же этапе жизненного цикла. Естественно, что в такой ситуации не приходится говорить о возможном информационном взаимодействии между предприятиями при совместной разработке и производстве продукции.

Необходимо сознавать, что решая важную проблему повышения качества и конкурентоспособности продукции на основе CALS-технологий, зарубежные фирмы преследовали и задачу ограничения доступа на рынок продукции тех предприятий, которые не сумеют овладеть этими новейшими технологиями. И дело не только в том, что наши предприятия не смогут говорить на одном информационном языке с зарубежными фирмами. Главное состоит в том, что применение CALS-технологий позволяет значительно снизить себестоимость производимой продукции при одновременном значительном повышении ее качества и удобства эксплуатации.

Это означает, что задержка с внедрением CALS-технологий в промышленности может привести, во-первых, к потере внешнего рынка наукоемкой продукции. Во-вторых, наши предприятия не смогут участвовать в рынке промышленной кооперации, т.е. поставке зарубежным фирмам комплектующих изделий. В-третьих, национальные корпорации, объединяющие десятки предприятий не смогут обеспечить эффективное взаимодействие проектировщиков, поставщиков материалов и комплектующих изделий, изготовителей и потребителей наукоемкой продукции. А это приведет к экспансии на внутренний рынок зарубежных фирм, использующих преимущества CALS-технологий. Поэтому перед нашими институтами и предприятиями стоит сложнейшая задача освоения в

ближайшие 5-7 лет процессов разработки и применения CALS-технологий для решения конкретных задач автоматизированного управления процессами проектирования, производства и эксплуатации наукоемкой продукции.

Наши ведущие предприятия-экспортеры уже сегодня столкнулись с такой ситуацией, когда обязательным условием заключения контракта на поставку наукоемкой продукции является требование предоставления пользователю технической документации в электронной форме в соответствии с требованиями стандартов CALS. Без решения этой задачи белорусские предприятия в ближайшее время начнут терять определенные сегменты рынка экспортируемой наукоемкой продукции.

Еще более трудным для выполнения является требование ряда зарубежных заказчиков о введении в качестве условий развития научно-технического сотрудничества компьютерного представления и обмена данными о поставляемой продукции на всех этапах ее жизненного цикла. Это требование становится нормой во взаимоотношениях между фирмами развитых стран. Решение этой исключительно сложной и трудоемкой задачи потребует для каждого предприятия нескольких лет напряженной работы по переводу проектно-конструкторских, технологических производственных и сервисных подразделений на принципиально новую, соответствующую требованиям CALS-стандартов электронную технологию разработки, производства и эксплуатации экспортируемой продукции.

В настоящее время целый ряд отечественных предприятий в рамках международного сотрудничества, в частности, при продаже сложных наукоемких изделий, а также лицензий на их производство уже столкнулись с требованиями соблюдения стандартов CALS применительно к поставляемой с изделием технической документацией в электронной форме, а также к средствам компьютерной информационной поддержки

процессов технического обслуживания, материально-технического обеспечения, заказа запасных частей и ремонта. Аналогичные проблемы, связанные с электронным взаимодействием и совместным использованием конструкторской, производственной и коммерческой информации в электронной форме, возникает в рамках совместных проектов по разработке и производству наукоемкой продукции, выполняемых с зарубежными партнерами. Таким образом, практическое применение CALS-технологий является чрезвычайно актуальной задачей.

В сложившейся ситуации нужны кардинальные и оперативные меры по ликвидации возникшего отставания отечественной промышленности в области разработки и реализации CALS-технологий, соответствующих требованиям международных стандартов. Дальнейшее промедление по внедрению CALS-технологий приведет к невосполнимому отставанию белорусской промышленности в этой области, в решающей степени определяющей не только уровень развития национальных технологических баз, но и экономическую и оборонную безопасность страны. С другой стороны, задержка с разработкой и реализацией CALS-технологий в различных отраслях промышленности станет в ближайшие несколько лет преградой для выхода предприятий на внешний рынок и послужит причиной дальнейшей экспансии импортной наукоемкой продукции на внутренний рынок стран СНГ.

Учитывая исключительную актуальность работ по применению CALS-технологий, нам представляется, уже в ближайшее время в рамках государственной программы по реструктуризации промышленности необходимо:

1. Разработать и апробировать программно-методические средства, предназначенные для хранения и управления данными о продукции в соответствии с CALS-стандартами;

2. Разработать технологии и программные средства подготовки электронной эксплуатации документации на изделие;

3. Разработать и передать в промышленность соответствующие стандарты по применению CALS-технологий. При этом, в первую очередь, необходимо выпустить стандарты по переводу технической документации, используемой потребителем, в электронную форму. Исключительную актуальность этой работы подтверждают запросы зарубежных потребителей наукоемкой продукции.

4. Объединить усилия заинтересованных министерств и ведомств в финансировании первоочередных исследований в области CALS-технологий.

5. В связи со сложившейся ситуацией в области развития CALS-технологий особую актуальность приобретают задачи обучения и аттестации специалистов в указанной сфере деятельности. Поэтому необходимо создать Государственный межведомственный центр по обучению и аттестации специалистов в области CALS-технологий. Подготовить соответствующие программы обучения, учебные пособия и компьютерные технологии обучения и аттестации специалистов.

6. К сожалению, в настоящее время для большинства отечественных предприятий и организаций непонятна актуальность скорейшего внедрения CALS-технологий в промышленное производство. Поэтому важнейшей задачей развития CALS-технологий является обеспечение предприятий информацией об отечественных и зарубежных разработках в области CALS-технологий. Для решения этой проблем необходимо:

во-первых, в рамках сети «Internet» создать многопрофильный сайт, в котором имелась бы постоянно обновляемая информация по отечественным и зарубежным стандартам и разработкам в области CALS-технологий. Для многих предприятий и организаций этот сайт – постоянный источник всей новой информации в сфере CALS-технологий;

во-вторых, проводить постоянно действующие выставки отечественных разработок в области CALS-технологий. Такая выставка крайне необходима предприятиям, которые будут заниматься разработкой и применением CALS-технологий для решения конкретных производственных задач;

в-третьих, необходимо организовать издание методических рекомендаций и учебников по применению CALS-технологий.

7. Разработать методику формализованного описания и анализа процессов, протекающих в ходе жизненного цикла изделия и создание на основе данного формализованного описания системы обеспечения качества продукции в соответствии с требованиями стандартов ИСО серии 9000.

PELIKH S. A.

*Doctor of Sciences (Economics),
Professor*

IVANOV F. F.

Fellow assistant of the Academy

MANAGING AN INDUSTRIAL ENTERPRISE IN TRANSITION ECONOMIES

The economic standing of industrial enterprises on the area of the former Soviet Union has been analyzed in the article. The authors are presenting their reasons of Joining of the Belarusian and Armenian industries to the world labour differentiation scheme, the latest managerial technologies, e.g. CALS, being resorted to.

ՆԱԻՐԱ ՏԱԿՈՒՅԱՆ

*ՏՏ ՊԿ ակադեմիայի պրոռեկտոր,
հոգերանական գիտությունների դոկտոր*

**ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐՆ
ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Մարզինալության երևույթի ուսումնասիրությանը նվիրված գրականության մեջ սովորաբար փարբերակում են մարզինալության փարբեր ձևեր՝ էկոլոգիական (աշխարհագրական), սոցիալական, փնսրեսական, մշակութային, քաղաքական, կրոնական, գաղափարական, էկզիսպրեսիոնալ և այլն, որոնք, հաշվի առնելով դրանց էությունն ու գործառնությունը, ընդգրկում են հետևյալ խմբերի մեջ՝

- ա) կառուցվածքային (սոցիալական) մարզինալություն,
- բ) մշակութային և էթնոմշակութային մարզինալություն,
- գ) սոցիալական դերերի մարզինալություն:

Կառուցվածքային մարզինալներ են կոչվում այն անձինք, սոցիալական խմբերը և էթնիկական հանրությունները, որոնք ձևավորվում են իրադրությունների, սոցիալական կառուցվածքների սահմանագծում, մեկ սոցիալ-մշակութային փիլից մյուսին անցնելու գործընթացի շրջանակներում կամ միննույն հասարակարգի և սոցիալ-մշակութային համափնսրեսարի լուրջ ձևափոխությունների ընթացքում:

Էթնիկական կամ էթնոմշակութային մարզինալներ են կոչվում այն մարդիկ (էթնիկական խմբերը, հանրությունները, համայնքները), ովքեր գտնվում են երկու կամ ավելի էթնիկական կամ սոցիոմշակութային աշխարհների (խմբերի) սահմանագծում, միջակայքում, սակայն չեն ընդունվում դրանց կողմից որպես լիիրավ ներկայացուցիչ:

Սոցիալական դերերի մարզինալությունը դրսևորվում է հերյևյալ դևաքերում՝

ա) երբ անձը չի կարողանում ինտերգրվել ռևֆերենտային խմբում կամ ունենալ սպասվելիք կարգավիճակը,

բ) երբ սոցիալական դերերի իրականացման ժամանակ առաջանում է հոգերանական բախում,

գ) մարզինալ սոցիալական և էթնիկական խմբերի անդամների գործունեության ընթացքում, երբ նրանք մարզինալ իրավիճակներում կարարում են անհամադրելի, իրարամերժ սոցիալական դերեր,

դ) երբ հակասություն է առաջանում իրական և երևակայական դերերի միջև:

Գրականության մեջ նաև արարերակում են **մշակությանին** և **անձնալին** (կամ էկզիստենցիալ) մարզինալության փիլսոքը: Մշակությանին մարզինալներ կարող են լինել էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչները, մշակությանին հիբրիդները, մշակությանին ինքնությունը կորցրած կամ նոր ինքնություն փնտրող մարդիկ: Որոշ հերազոտողների (Ս. Բոչներ, Զ. Բերրի, Ա.Ի. Դոնցով, Տ.Գ. Ստեֆանենկո, Վ.Ա. Շապինսկի և ուրիշներ) կարծիքով մարզինալությունն առավելապես մշակությանին երևույթ է, միջմշակությանին փոխշփումների արդյունք: Օրինակ՝ Վ. Ա. Շապինսկին կարծում է, որ **մարզինալություն** հասկացության օգտագործումը գիտելիքի մյուս ոլորտներում հանգեցնում է դրա բովանդակության անարդյունավետ ընդլայնմանը: Ի դեպ, **մշակությանին մարզինալություն** ասելով նա հասկանում է անհարի (խմբի, հանրույթի) այնպիսի վիճակ, երբ անհարը (խումբը, հանրույթը) ներառված լինելով հասարակության սոցիալական, քաղաքական ու արտեսական կառուցվածքների մեջ, միևնույն ժամանակ փվյալ սոցիումի մշակությանին արժեքների նկարմամբ գտնվում է սահմանագմային, լուսանցքային վիճակում: Դա կարող է իր արտահայտությունը գտնել անհարի, փվյալ սոցիումի մեջ ընդունված արժեքային կողմնորոշումներից դուրս

վորվում խմբերի մեջ՝ գործում են միայնակ, սոցիալական կյանքում նկատելի դեր չեն խաղում (ավելի հստակ, չեն ուզում խաղալ): Տաճախ դրանք փառանդավոր, հանճարեղ մարդիկ են (արվեստագետներ, փիլիսոփաներ, գիտնականներ և այլն), որոնց առաջադրած գաղափարները չեն ընկալվում և չեն ընդունվում հասարակության կողմից: Այդպիսի մարզինալի փիլական օրինակ է Ֆրիդրիխ Նիցշեի «Խենթը», որը «Զվարթ գիտության» մեջ ասում է. «Դուք չե՞ք լսել այն խենթի մասին, ով օրը ցերեկով մի լապտեր վառեց, վազեց շուկա և սկսեց շարունակ գոչել՝ Ես փնտրում եմ Աստծուն: - Քանի որ այնտեղ՝ հավաքվածների մեջ, շար էին նրանք, ովքեր Աստծուն չէին հավատում, նա քրքիջ առաջ բերեց: - Ինչ է, նա կորե՞լ է, - ասաց մեկը: - Չլինի՞ թե նա մոլորվել է, ինչպես երեխա, - ասաց մյուսը: Կամ գուցե թաքնվե՞լ է: Նա մեզանից է վախենում: Չլինի՞ նավ է նստել, այստեղից մեկնել է, - այսպես խառնիխուռն գոչում էին նրանք ու ծիծաղում: Խենթը ներվեց նրանց մեջտեղը և հայացքով շամփրեց նրանց: «Ո՞ր է Աստված,- գոչեց նա,- ես ձեզ կասեմ: Մ ե ն ք ն ր ա ն ն ս պ ա ն է լ է ն ք՝ դուք և ես: Մենք ամենքս նրան սպանողներն ենք: ...Աստված մեռած է: Աստված մեռած էլ կմնա: Եվ մենք ենք նրան սպանել: Ինչպե՞ս սփռվեց մենք՝ բոլոր մարդասպաններից ամենամարդասպաններս: ... Արդյոք չափից ավելի մեծ չե՞ մեզ համար այդ արարքի մեծությունը: Արդյոք մենք ինքներս չպե՞տք է աստվածներ դառնանք՝ դրան գոնե լոկ արժանի երևալու համար: ... Այստեղ խենթը լռեց և հայացքը կրկին ուղղեց իր ունկնդիրներին. նրանք նույնպես լուռ էին և ապշած նայում էին նրան: Վերջապես նա ներեց իր լապտերը գետին, այնպես, որ այն փշուր-փշուր եղավ ու հանգավ: «**Ես շար ավելի վաղ եմ եկել,-** ասաց նա,- **իմ ժամանակը դեռ չի եկել**»¹: Կեղծ աստվածապաշտներից ու բարեպաշտներից բաղկացած հասարակության համար Աստծու մահն ազդարարող Խենթը (ավանդական արժեքները մերժող իմաստունը) «խելքից դուրս» երևույթ է, այսինքն՝ մարզինալ անձնավորություն է, բայց, ակնհայտ է, որ

¹ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, Երևան, 2002, էջ 7-8:

առանց նրա հայրնության հասարակությունը կխեղդվի «աստվածային նեխումի հուրից»:

Անձնային մարզինալության պարագայում հարկավոր է փարբերակել ներքին շարժառիթներով և արտաքին հանգամանքներով պայմանավորված մարզինալություն: Եթե վերջին դեպքում անձը ցանկանում է հաղթահարել իր մարզինալությունը (այսինքն՝ իր կարգավիճակը նա համարում է «ոչ բնականոն»), ապա առաջին դեպքում նա կարող է իր մարզինալ կարգավիճակը օգտագործել որպես աղապարարիվ մարտավարության ձև կամ որպես հոգեբանական պաշտպանական կառուցակարգ (այսինքն՝ նա արդարացնում է իր մարզինալ կարգավիճակը՝ դա համարելով միանգամայն «նորմալ» երևույթ): Եթե այս փեսանկյունից նաև մտքնանաք մարզինալության խնդրին, ապա կարող ենք ենթադրել, որ անձի համար կամավոր մարզինալությունը որոշ դեպքերում կարարում է էգոպաշտպանական գործառույթ:

Մարզինալության սոցիալ-կառուցվածքային, էթնիկական և մշակութային փիպերը սերտորեն կապված են սոցիալական դերերի մարզինալության հետ այնքանով, որքանով որ դրանք իրենց դրսևորում են անհատի կողմից իրականացվող դերերի միջոցով: Եթե անհատը հայրնվել է մարզինալ վիճակում և ունի մարզինալ կարգավիճակ, ապա, բնականաբար, նրա սոցիալական դերակարարումների մի մասը կունենա մարզինալ բնույթ:

Նարկ է նշել, որ մարզինալության մշակութային, էթնոմշակութային, սոցիալ-կառուցվածքային և սոցիալական դերերի փիպերը գտնվում են միասնության, փոխկախվածության ու փոխկապվածության մեջ, և հաճախ գործնականում դժվար է լինում դրանք իրարից սահմանազատել: Անձը կարող է ոչ թե մեկ, այլ մի քանի առումներով ունենալ մարզինալ կարգավիճակ: Ավելի ստույգ, մարզինալության ձևերն այս կամ այն փիպի մեջ ընդգրկելը կախված է հետազոտական որոշակի խնդրի լուծումից: Օրինակ՝ էթնիկական մարզինալությունը կարելի է դիտարկել թե՛ սոցիալական, թե՛ մշակութային և թե՛ սոցիալական դերերի մարզինալության փեսանկյուններից:

Այսպես, սերտ կապ գոյություն ունի մշակութային մարզինալության և սոցիալ-կառուցվածքային մարզինալության միջև: Մշակութային խռովարարը կամ այլախոհը, որը չի ընդունում տվյալ մշակույթի արժեքներն ու չափանիշները և հակադրվում է հասարակության պաշտոնական, գերիշխող սոցիոմշակութային արժեքներին, իր դիրքորոշման պատճառով կարող է հայտնվել սոցիալական կառուցվածքներից դուրս: Օրինակ՝ խորհրդային շրջանում, երբ գանազան կարգի, այդ թվում մշակութային մարզինալները հերասպնդվում էին, նրանք դուրս էին մղվում ոչ միայն սոցիալական կառուցվածքներից, իրենց գործունեության հիմնական ոլորտներից, այլև հաճախ մեկուսացվում էին հասարակությունից կամ արտաքսվում պետությունից:

Կառուցվածքային մարզինալությունը կարող է ծնել մշակութային մարզինալություն: Այսպես, եթե անձը հայտնվում է սոցիալական կառուցվածքներից այն կողմ, ապա այդպիսի կարգավիճակը կարող է ունենալ փարբեր մշակութային և գաղափարական դրսևորումներ: Կամ, հակառակը, մշակութային, գաղափարական մարզինալները կարող են ճնշվել, բռնությունների ենթարկվել հասարակության ռեֆերենտային խմբերի կողմից և վերածվել սոցիալական մարզինալների: Միևնույն ժամանակ, կարելի է լինել մշակութային մարզինալ, չլինելով սոցիալական մարզինալ: Օրինակ՝ մարդը կարող է ներառված լինել տվյալ հասարակության սոցիալական կառուցվածքներում, ունենալ որոշակի սոցիալական կարգավիճակ ու զբաղեցնել որոշակի դիրք, սակայն կարող է գիտակցել իր մշակութային մեկուսացվածությունը, օտարվածությունը կամ միայնությունը: Իրենց հերթին սոցիալական մարզինալները կարող են ընդունել հասարակությունում գերիշխող սոցիոմշակութային նորմերը և վարքագծի ձևերը: Մարդը միաժամանակ կարող է մասնակից լինել մեկից ավելի ենթամշակույթներին կամ սոցիալական խմբերին, ընդամին, դրանցից մեկը կարող է լինել ռեֆերենտային, պաշտոնապես ընդունված, իսկ մյուսը՝ մարզինալ: Եթե դրանք հակասում են իրար և անձը գիտակցում է այդ հակասությունը, ապա նա կհայտնվի դիսկոնֆորտի մեջ:

Նկարի ունենալով վերոշարադրվածը՝ կարող ենք առանձնացնել մարզինալ անձանց փարբեր փիպեր.

1) միակողմանի մարզինալներ, ովքեր մի առումով, մի հարաբերության փեսակերից են դառնում մարզինալ: Ընդ որում, կախված այն բանից, թե այդ կողմը կամ հարաբերությունը սուբյեկտիվորեն որքանով է նշանակալից անձի համար, կարելի է պարկերացում ունենալ անձի մարզինալացման ասփճանի և հոգեվիճակի մասին: Նման դեպքում հնարավոր են հերկյալ փարբերակները՝

ա) եթե գործունեության փվյալ ոլորտն անձի համար առաջարար նշանակություն չունի, ապա մարզինալացման երևույթը էական ազդեցություն չի ունենա նրա հոգեվիճակի փոփոխության վրա,

բ) իսկ եթե գործունեության այդ ոլորտը խիստ նշանակալից լինի անձի համար, ապա միայն այդ կողմը բավական է փակնուվրա անելու նրա հոգեկան աշխարհը, կազմալուծելու Ես-կոնցեպցիայի միասնությունը:

2) Կրկնակի կամ բազմակողմ մարզինալներ, ովքեր փարբեր առումներով, փարբեր հարաբերությունների ու իրավիճակների փեսակերից են դառնում մարզինալներ: Այս դեպքում անխուսափելի է մարզինալացման գործընթացի անմիջական ազդեցությունն անձի կոգնիտիվ, վարքագծային և հուգական բաղկացուցիչների վրա: Նման պարագայում անձը փարբեր կողմերից սրանում է «հարվածներ», այսինքն՝ հոգեբանական առումով դառնում է խոցելի և, բնականաբար, դժվարանում է ընտրել աղեկվար պաշտպանական կառուցակարգեր կամ իրադրության համապարասխան աղեկվար որոշումներ:

NAIRA HAKOBYAN

Doctor of Sciences (Psychology)

TYPES AND AXPRESSIONS OF MARGINALITY

The article concerns with one of the fields of social psychology, which hasn't been studied well yet, marginality and its types. The types differentiated in literature are presented – ecological, social, economic, political, etc. that are included in the following large groups of marginal groups - structural, cultural, social. Prticularly, the forms of expression of social marginal roles, peculiarities and characteristics of personal marginality, and new types of marginality – mono-lateral marginals and bilateral marginals are differentiated by the author.

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

**ՆՏ ՊԿ ակադեմիայի
քաղաքագիտության ամբիոնի ասիստենտ**

ՆՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի ողբերգության մեջ թաքուն ուրախություն կայ - այն գիտակցությունը, որ մեր ոգին ողբերգությունից դուրս պիտի գայ ասելի՜ հզորացած:

Գ. Նժդեհ¹

Այսօր աշխարհը թևակոխել է գլոբալ զարգացման մի նոր փուլ, որը բնորոշվում է ազգային հոգևոր-մշակութային, բարոյական, գաղափարական արժեքների կերպավորմամբ, արդիականացմամբ և վերաիմաստավորմամբ: Այս պայմաններում ազգային հոգևոր անվտանգության հիմնախնդիրներն էլ ավելի այժմեական ու նշանակալից են դառնում:

Եթե ռազմական կամ արևմտյան անվտանգության դերն ակնհայտ է, ապա հոգևոր անվտանգությունը որպես երևույթ շատ ավելի բարդ է, և հենց ինքը՝ այս հասկացությունը բոլորովին վերջերս է դրվել գիտական շրջանառության մեջ: Երկրի, հասարակության, ազգի հոգևոր անվտանգության սպառնալիքներն անմիջապես չեն երևում. այսպեղ կրած կորուստների հետևանքները կարող են միառժամանակ չգիտակցվել, սակայն որոշակի փուլից սկսած դրանք անդառնալի են: Այս առիթով հերարդյունաբերական հասարակության արեսաբան, ամերիկացի սոցիոլոգ Դ.Բելը նշում է. «Գաղափարներն ու մշակութային ոճերը չեն փոփոխում պատմության ընթացքը՝ գոնե միանգամից: Սակայն դրանք փոփոխությունների անհրաժեշտ նախնազանքն են, քանզի արեղաշարժերը գիտակցության մեջ՝ արժեքային համակարգում և բարոյական հիմնավորումներում դրդում են մարդկանց իրենց սո-

¹ Մի զինուորի ճշմարտությունները // *Գ. Նժդեհ* Մեծ գաղափար (նորահայտ նյութեր): Եր., 2002, էջ 103

ղաքական, ռազմական, սահմանադրական, փնտրեսական, փրկելակարվական, բնապահպանական ոլորտներում, եթե ապահովված չէ անվտանգությունը հոգևոր ոլորտում, եթե պարզաճ կազմակերպված չէ անհատի և հասարակության հոգևոր, մշակութային, գաղափարական միջավայրի պաշտպանությունն ու կայուն զարգացումը:

Նոզևոր անվտանգության հասկացությունը

Նոզևոր անվտանգությունը ենթադրում է հիմնարար բարոյական արժեքների ու ավանդույթների սրբազանում, ազգային շահերից ելնելով՝ ցանկացած արարաբին սպառնալիք արդյունավետ հաղթահարելու ունակության դասարհարակում:

Նոզևոր անվտանգությունը հասարակության կենսագործունեության հոգևոր-գաղափարախոսական, բարոյական, մշակութային հիմքերի պաշտպանվածության վիճակն է:

Նոզևոր անվտանգությունը պայմանների համակարգ է, որը թույլ է տալիս հասարակության, նրա հոգևոր, գաղափարախոսական, մշակութային, բարոյական, քաղաքակրթական արժեքների կենսականորեն կարևոր չափորոշիչները պահպանել պայմանականորեն կայացած նորմերի շրջանակներում՝ նոր մակարդակի հասցնելով իր քաղաքական «Ես»-ը: Տարբեր փեսակի (նախնառաջ՝ մշակութային, արժեքանորմաբովանակյալ բնույթի) գործոնների ազդեցությամբ նորմի շրջանակներից դրանց դուրս գալը հանգեցնում է ապակազմակերպման և, վերջին հաշվով, ազգային աղերի, այսինքն՝ հասարակության՝ որպես միասնական համակարգի փրոհման՝ նրան կառուցվածքավորող, միավորող հոգևոր հիմքերի փլուզման պարճատով:

Գլոբալացման գործընթացի պայմաններում այդ հիմքերը լուրջ փորձությունների են ենթարկվում: Արմատական կերպափոխման են ենթարկվում դարեր ի վեր Նայաստանին ներհատուկ ավանդույթներն ու արժեքները, միտում է նկատվում՝ ազգին համընդհանրացված, հաճախ՝ օտար կենսակերպ և նորմեր մարուցելու: Տեղի է ունենում իրական մշակութային արժեքների արժեզրկում և դրանց փոխարինում զանգվածային մշակույթի փոխարժեքներով: Մեծ փարածում է սրացել սպառողական բարբը, իսկ ավանդա-

կանոններն թերություն համարվող շարք երևույթներ բարձրացվում են առաքի-
նության աստիճանի: Այս ամենը վկայում է հասարակության հոգևոր անա-
ռողջության, հոգևոր-բարոյական ու գաղափարական հիմքերը կորցնելու
հնարավորության մասին: Ուստի կարևոր է ոչ միայն գիտակցել հասարա-
կության վրանգվածության աստիճանը, այլև որոշել, թե ինչ ուղիներով կա-
րելի է չեզոքացնել հասարակության հոգևոր ոչնչացման սպառնալիքը:

Ձգձգված անցումային շրջանը, պետականության կայացման ճանա-
պարհին ծառայած հիմնախնդիրները, հասարակության արժեքային համա-
կարգի խարխուլումը լայն դաշտ ստեղծեցին ազգային անվտանգության
տարբեր տեսակի սպառնալիքների գործառնության համար, այդ թվում՝ հո-
գևոր: Այսօր հոգևոր սպառնալիք են կրում տարբեր գործոններն ու երևույթ-
ները (ընդ որում, դրանցից շատերը վտանգ են ներկայացնում մարդկային
ողջ քաղաքակրթության համար)՝

- արդիականացման և գլոբալացման շիթային գործընթացները,
- դրսից տնտեսական ու քաղաքական մոդելների անքննադատ փոխա-
ռումը և ներդրումը,
- ազգային հոգևոր մշակույթի, քրիստոնեության հիմնային արժեքային
համակարգի խարխուլումը և ոչ ավանդական ու քայքայիչ կրոնական հո-
սանքների, գաղափարախսությունների գալթողագործությունը,
- ՁԼՄ-ների միջոցով հասարակական գիտակցության խեղաթյուրումը
(ապստեղեկավարվացում, դաժանության, սպանությունների, բռնության,
այլասերվածության տեսարանների ցուցադրում և այլն),
- գնահատության չենթարկված տեղեկավարություն մատուցելու միջոցով
հակահասարակական ու հակաիրավական կենսակերպի և վարքագծի
չափանիշների նպատակաուղղված պարտադրում:

Նեղ շահադիտական նկատառումներով, ՁԼՄ-ները բնակչության շրջա-
նում վախ են սերմանում՝ ձևավորելով գիտակցության աղետային տեսակ,
ինաստիքազրկելով սեփական ճակատագիրը կառուցելու ցանկացած դրական
ջանք: Ինչպես արդեն նշվեց, հոգևոր ճգնաժամի վտանգը դրա հետևանքնե-
րի անտեսանելիությունն ու տարկեպումն է. հասնող աղետը [հակազդման
միջոցով] համակարգի զարգացման հզոր խթան կարող է դառնալ միայն

այն դեպքում, երբ նա անմիջապես սպառնում է վերջինիս, ծառանում նրա առջև որպես բնկումնային կերպ, որպես ընտրության անխուսափելիություն:

Այդպիսի իրավիճակում՝ սպառնալիքի անխուսափելիության առջև աշխարհի պարկերը կտրուկ փոխվում է, ի մի են բերվում առկա բոլոր ռեսուրսները, ինչը հաճախ փրկում է հասարակական օրգանիզմը մահից՝ փոխադրելով նրան որակական նոր փուլ և հարմարեցնելով իրավիճակին: Մակայն հոգևոր ճգնաժամի պայմաններում, հակազդող միջոցները կարող են ուշացած լինել:

Գլոբալացման պայմաններում հոգևոր-արժեքային համակարգի համահարթեցման քաղաքականությունը երբեք փարերային բնույթ չի կրում, դեռ ավելին՝ դրանք ներկայանում են որպես Կոլյալ արժեհամակարգի յուրային, բաղկացուցիչ փարեր: Տեղեկատվության տեսքով ներթափանցելով հասարակության, անհատների գիտակցության մեջ, այդ տեղեկատվությունը սկսում է աստիճանաբար փոփոխության ենթարկել նրանց հոգևոր, գաղափարախոսական, մշակութային կառուցվածքը և, ի վերջո, իրեն հարմար հունով ուղղորդելու վարքագիծը: Քաղաքակրթության փորձն սպացուցում է, որ այս գործընթացի փուլերը կարող են ձգված լինել ժամանակի մեջ, սակայն նպատակն անխուսափելիորեն մնում է նույնը՝ մանիպուլացնել մարդկանց գիտակցությունը, նրանց դավանած արժեքները փոխարինել կեղծ ու պարզունակ փոխարժեքներով, հնազանդեցնել, անհրաժեշտ կողմնորոշում հաղորդել մարդուն, հասարակությանը, ազգին, ի վերջո, փիրանալով նրանց կենսաաշխարհագրական փարածությանն ու պաշարներին: Ներաբրբիր է, որ բնության մեջ այս կարգի երևույթները բավականաչափ ուսումնասիրված են. օրարը, ներխուժելով մի որևիցե համակարգի տեղեկատվական դաշտ և այնտեղ փոփոխություններ կատարելով, այդ համակարգը բերվում է «հնազանդության», սկսում է կատարել օրարի հրամանները՝ հաճախ հակառակ իր սեփական շահերին: Ահա թե ինչ փոխաբերություն է բերում այս առումով ռուս քաղաքագետ Ս.Կարա-Մուրզան. «Ահա վարակահարուցիչը՝ սահմանային գոյացություն կենդանի և անկենդան բնության միջև: Այն ցույց է տալիս օրար ծրագրի խախտման հնարավորությունները: Վարակահարուցիչը կարողանում է շահագործել կենդանի բջիջների որոշակի տեսակ, «գիտի» գրնել դրանք, կաշել դրանց թաղանթին: Կաշելով, նա բջիջի մեջ է մղում միայն մի մոլեկուլ՝ ՌՆԹ, որում գրված են վարակահարուցիչներ «արտադ-

րելու» հրամանները: Եվ բջիջի մեջ առաջանում է գաղտնի, սրվերային կառավարություն, որն իր կամքին է ենթարկում համակարգի կենսագործունեությունը (բջիջը վարակահարուցիչի համեմատ մի ամբողջ երկիր է): Բջիջի բոլոր ռեսուրսներն այժմ ուղղված են նրա մեջ ներդրված մասրիցում գրված հրամանների կատարմանը: Բջիջի բարդ արտադրական համակարգերը վերակարգավորվում են վարակահարուցիչի միջնաձող թողարկելու և դրանք սպիտակուցային թաղանթով պատելու, ինչից հետո հյուծված բջիջը մահանում է: Մա փոխգործակցության նախնական, հիմնային եղանակն է, որի դեպքում կյանքի դրամայի մի մասնակիցն ստիպում է մյուսներին գործել իր շահերից ելնելով ու իր ծրագրով այնպես, որ դա չի բացահայտվում զոհերի կողմից և նրանց մոտ հակազդեցություն չի առաջացնում»¹:

Ազատականացման մարտահրավերները

Աշխարհում րեղի ունեցող գլոբալ գործընթացները մեծապես ընթանում են րնրետական, քաղաքական, հոգևոր ոլորրների ազատականացման, արևմրյան (հիմնականում ամերիկյան) արժեքների պարտադրման դրոշի ներքո: Այս պարագայում անհրաժեշտ են համարում դիտարկել հոգևոր անվրանգության վրա ազդող ինչպես ներքին, այնպես էլ արտաքին՝ համաշխարհային բնույթի գործոնները:

Նախ՝ ԽՍՀՄ փրուգումից հետո էականորեն ձևախեղվել է **հասարակության հոգևոր ինքնավերարդրության համակարգը՝** նախևառաջ, սոցիալականացման ու մշակութային ժառանգորդության ինստիտուրների ճգնաժամի արդյունքում, որոնցից են գաղափարախոսության, կրթության (և դաստիարակության՝ որպես դրա կարևորագույն բաղադրարարի), մշակութի ինստիտուրները: «Վագող» արդիականացման հետևանքով ազատականացվող պետական քաղաքականության բացթողումներն արտահայրվեցին ոչ միայն միջնակարգ և բարձրագույն դպրոցին, գիտական և մշակութային հասարարություններին ոչ պարշաճ ուշադրություն դարձնելով, այլ, ինչն ավելի էական է՝ դրանց նպարակների ու արժեքների չարդարացված ձևափոխմամբ: 1990-ականների վերափոխումների ժխտողականությունը հայկական և խորհրդային գիտության, կրթության, մշակութի նվաճումների նկարմամբ, համընդհանուր պայքարը դաստիարակության բովանդա-

¹ Кара-Мурза С. Манипуляция сознанием. М., 2001, с.6.

կության, ձևի և մեթոդների գաղափարախոսական ուղղվածության դեմ հանգեցրին համակողմանի զարգացած անձի իդեալի վարկաբեկմանը, դաստիարակության ինստիտուտի վերացմանը, հոգևոր արտադրության այս ձևի բացառմանը հանրակրթական ու մասնագիտական դպրոցի կյանքից, մշակութային ժառանգության վարկաբեկմանն ու անտեսմանը՝ հանգեցնելով, ի վերջո, ճգնաժամային իրավիճակի, որի պայմաններում վրանգված են ազգի դարավոր ավանդույթներն ու կենսակերպը, բարոյահոգեբանական արժեքները: Նոր փոխարժեքների ներարկումը բերում է հասարակական օրգանիզմի պաշտպանական կառուցակարգի՝ ազգային արժեհամակարգի վերարտադրության խաթարմանը:

Մշակված ազգային գաղափարախոսության բացակայությունը, ազգամշակութային նույնականության արժեքային հիմքերի խարխլումը, հայ հասարակության համար դեռևս չարժևորված (հիմնականում արևմտյան) կենսակերպի չափանիշների գավթողագործությունը հանգեցրել են ապահասարակական ու հակաիրավական վարքագծի ծավալների աճի, զանգվածային գիտակցության ուղղորդումը բացարձակապես դեպի նյութական բարեկեցությունը, հաճույքները և զվարճանքները: Այս ամենն արդեն հասցրել է էականորեն ձևափոխել հասարակության, հայրկապես՝ երիտասարդության գիտակցությունը: Դիտարկելով արևմտյան հասարակության (որի արժեքները մենք այսօր փոխառում ենք) զարգացման միտումները, դեռ XX դարի 70-ականներին Դ. Բելը նշում էր. «...XIX դարի բուրժուական հասարակությունը համախմբված ամբողջություն էր, որում մշակույթը, ներքին կառուցվածքը և արտաքինությունը ներթափանցված էին միասնական արժեհամակարգով: Դա կապիտալիստական քաղաքակրթությունն էր իր զագաթնակետում: Զարմանալի է, բայց այդ ամենը խարխլվեց հենց կապիտալիզմի կողմից: Զանգվածային արտադրության ու սպառման միջոցով նա քանդեց բողոքական բարոյագիտությունը՝ ջանասիրաբար ներդնելով գեղոնիստական կենսակերպը: XX դարի կեսին կապիտալիզմը փորձում է իրեն արդարացում գտնել ոչ թե աշխարանքի կամ սեփականության, այլ նյութական հարստություններին փիրապետելու կարգավիճակային խորհրդանիշների և հաճույքների մշակույթի մեջ: *Կենսամակարդակի բարձրացումը և բարո-*

յական նորմերի թուլացումը (ընդգծումն իմն է՝ Ս.Ս.) դարձել է ինքնանպաստանք՝ որպես անձի ազատության արտահայտում»¹:

Արդյունքում հասարակական կառուցվածքի կերպավորությունը ուղեկցվում է չարժևորված փոփոխություններով, քանի որ արտադրության և աշխատանքի կազմակերպման ոլորտում իր անդամներից հաշվենկապ վարք, աշխատասիրություն և ինքնակազմակերպում պահանջելով, սպառման ոլորտում համակարգն սրելով է պահի պաշտամունք, մեծարում շոայությունը, ցուցամոլությունը և խաղային իրավիճակների որոնումը: Սակայն երկու ոլորտներում էլ համակարգն անկայուն է, քանզի հասարակությունում ոչնչացված են ավանդական բարոյագիտության գրեթե բոլոր սկզբունքները:

Այս առումով ռուս քաղաքագետ Ա.Պանարինը, վերլուծելով հարկադրական արևմտականացման ձևով մատուցված Արևելք-Արևմուտք, Նյուսիս-Հարավ միավորման նախագծի փաստաթուղթը, նշում է, որ այդ անհաջողությունը կապված է ոչ այնքան արտաքին խնդիրների (օտար մշակույթների դիմադրությունը), որքան նրա ներքին աստիճանական անկման, «հորիզոնականի փրամարանությամբ» նախորոշված նրան ներհատուկ բարբարոսացման ազդակների հետ²:

Այսպիսով, փվյալ հոգևոր-մշակութային (ինչպես նաև փնտրանական, քաղաքական, սոցիալական) համակարգ օտար արժեքների անարգել և անքննադատ ներթափանցումը սպառնում է հասարակությանը դուրս բերել կայուն զարգացման ուղուց՝ պատճառ դառնալով ինքնության կորստի և ինքնավերարտադրության սկզբունքների խաթարման: Արդյունքում, խզվում է անցյալ-ներկա-ապագա եռամիասնությունը:

Երկրորդ՝ գլոբալացման ու փեդեկապիտալական փեխնոլոգիաների զարգացման պայմաններում համաշխարհային ազդեցության կարևոր գործոն է դառնում մշակույթը, որը գերակայություններն օգտագործում են որպես գործիք՝ այս կամ այն փարածաշրջանն իրենց ազդեցության ոլորտ ներգրավելու համար: Աշխարհաքաղաքական ռազմավարություններում մշակութային

¹ Белл Даниел. Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования. М., 1999, с.647-648.

² Панарин А.И. Глобальное политическое прогнозирование в условиях стратегической нестабильности. М., 1999, с.173.

գործոնի ուժեղացումն ուղեկցվում է մի շարք բացասական հետևանքներով, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխարհաքաղաքականության հայեցակարգային հիմքերը մշակելիս: Մի կողմից, մշակութային համագործակցությունը և քաղաքակրթությունների երկխոսությունը ժողովրդավարության գրավական են, միջազգային և ազգամիջյան բախումների, բռնությունների ու պատերազմների կանխման պայման: Մյուս կողմից, համաշխարհային հանրությունը թևակոխել է քաղաքական զարգացման նոր փուլ, որում համաշխարհային քաղաքականության մեջ զբաղեցրած գերիշխող դիրքը և բախումների հիմնական աղբյուրներն ու միջոցները հիմնականում պայմանավորված են ազգամշակութային, քաղաքակրթական տարբերություններով և հակասություններով, ինչպես նաև տեղեկատվական գործոններով: Մշակութային երկխոսության դերակատարների անաչառ կամ կողմնակալ անհավասարությունն աշխարհաքաղաքական ազդեցություն իրականացնելու կարևոր նախադրյալ է: Երկխոսություն վարող կողմերից մեկի անինքնաբավությունը, «օտար» մշակութային մոդելը կրկնօրինակելու ձգտումը նվազեցնում են համագործակցելու արդյունավետությունն ազգամիջյան շփումներում, ինչն, ի վերջո, խորացնում է ազգային ու մշակութային թերաբժեքության բարդույթը և բացում սահմանները՝ առաջնորդ երկրների մշակութային զավթողագործության համար: Ավելին, այդպիսի պայմաններում հնարավոր չէ ապահովել նույնիսկ մրցակցության փոքր-ինչ ընդունելի մակարդակը: Ֆրանսիացի տեսաբան Ս.Մոսկովիչին այս կապակցությամբ գրում է. «Սոցիոմշակութային դրույթների համապատասխանությունն, ըստ էության, նախնական հոգեբանական պայման է նույնիսկ մրցակցության համար: Քանզի միայն այն դեպքում, երբ հակազդող ու պայքարող կողմերը խոսում են միևնույն լեզվով, պահպանում են միևնույն կանոնները, միանման են ընկալում իրենց շահերը, նրանք ի վիճակի են պայքարել իրենց շահերի համար խելամիտ կերպով և առանց բռնի միջոցների: Նակատակ դեպքում շուկան ճակատամարտի ու մրցապայքարի դաշտ, պատերազմի ձև կդառնար»¹:

Նոզկոմ-մշակութային զավթողագործության հետևանքները կարող են մեծ ծավալներ ընդունել, եթե հանրույթը չի կարողանում ներդաշնակել ազգային և համընդհանուր սոցիո- և էթնոմշակութային արժեքները: Ահա թե

¹ Москвичи С. Машина, творящая богов. М., 1998. с. 160.

ինչպես է գնահատում ազգարական բարեփոխումների՝ Ռուսաստանին պարճառած վնասները Ա.Պանարինը. «Ընդամենը յոթ տարվա ընթացքում Ռուսաստանում ազգարական փորձի իրականացրած ավերածություններն ապշեցնում են: Ընդ որում, եթե դրանք լինեին միայն նյութական ավերածություններ, ապա, ինչպես ցույց տվեց հեղափարեազմյան Գերմանիայի և Ճապոնիայի փորձը, դրանք կարելի էր արագ լրացնել: Բայց ավերածություններն իրականում կրում են *սոցիալ-քաղաքակրթական* բնույթ, դրանք վերաբերում են մարդկանց քաղաքակիրթ գոյության բուն նախադրյալներին: Պարզվեց, որ ... հավաքի և վստահության, այլ ոչ թե բուն հաշվարկի վրա խարսխված այս բոլոր «վերանհատական էությունները» քանդած ազգարական փորձն այնպիսի դևերի արթնացրեց, որոնք իրենց մոլեգնությամբ ու հակամարդասիրական համակվածությամբ բոլորովին չեն զիջում կոմունիզմի դևերին»¹:

Մինևույն ժամանակ, պետք է հիշել, որ ազգարական գաղափարախոսությունը բնականորեն գործում է առնվազն երկու հակակշիռների պայմաններում՝ «վերապրուկները» պահպանող *պատմության* հակակշռի (որին էլ եվրոպական հասարակությունը պարտական է իր կայունության համար) և *այլ գաղափարախոսությունների* հակակշռի, որոնք ձախից (սոցիալիզմ) և աջից (պահպանողականություն) շրկում են նրա անհատական-մեխանիստական ծայրահեղությունները:

Երրորդ՝ ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված լայնածավալ փոփոխությունները, կերպավորվելով աշխարհը, սկիզբ են դրել նոր աշխարհակարգի: «Մառը պատերազմի» ենթակառուցվածքի և գաղափարախոսության վրա հիմնված երկբևեռ աշխարհակարգի փլուզումը նախադրյալներ է ստեղծել աշխարհաքաղաքական ուժերի ինչպես միարևեռ, այնպես էլ բազմարևեռ դիրքավորման համար: Գլոբալ զարգացումներով պայմանավորված, միջազգային, միջակարական, միջկորպորատիվ փոխգործակցությունն ու փոխկախվածությունն ստացել է համաշխարհային բնույթ՝ արտահայտելով ցանցային կառավարման տրամաբանությունը: Միջազգային հանրությունն սկսել է կարևորել ժամանակակից քաղաքակրթության կենսունակության ապահովման քաղաքականության մշակմանն ուղղված համարեղ գոր-

¹ **Панарин А.И.** Глобальное политическое прогнозирование в условиях стратегической нестабильности. М., 1999, с.177-178.

ծողությունների հրամայական անհրաժեշտությունը: *Ներկայումս ուժեղանում է հոգևոր ազդեցության և համաշխարհային տարածության բաժանման համար մղվող սայթառը: Այսօր «համաշխարհային առաջնորդների»՝* զարգացող երկրների նկատմամբ աշխարհաքաղաքական գավառագործության ռազմավարական նպատակներից կարևորագույնը վերջիններիս իրենց նմանեցնելն է. քաղաքական ու փնտեսական համակարգի, սոցիալական կարգի, գաղափարախոսության, հոգևրանության, մշակույթի առումով:

Միննույն ժամանակ, ազատականության գրավչությունն ու համոզելու ունակությունը նվազելուն համընթաց, համաշխարհային առաջնորդները ստիպված կլինեն խստացնել իրենց սոցիալական փոխնուրոգիաները: Նրանք, ովքեր չհեղինակն արևմտյան «մեծ ուսմունքին», կդիվականացվեն, նրանցից կվերագրվեն մարդկային կերպարից զուրկ թշնամու հատկանիշներ, իսկ աշխարհը կհեղեղվի առասպելներով, որոնցում մոլորակի նորանոր տարածաշրջաններ, պետություններ և մշակույթներ կանվանվեն «չարիքի կայսրություն», որոնց չվերացնելով «առաջադեմ մարդկությունը» չի կարող հանգիստ լինել¹: Ինչպես փեսնում ենք, Ա.Պանարինի այս խոսքերը մարգարեական էին. ունենալով փեսական «հզոր հիմնավորում» (Ս.Նանփինգբոռնի «Քաղաքակրթությունների բախում», Ֆ.Ֆուկույամայի «Պատմության ավարտը») արևմտյան աշխարհը՝ հանձինս ԱՄՆ-ի, այսօր նոր մարտահրավերներ է նետում՝ «չարիքի առանցքում» ընդգրկելով իր ազդեցության ոլորտը ընդգրկվել չցանկացող, քաղաքական, փնտեսական, հոգևոր-մշակութային զարգացման սեփական հարացույց մշակող երկրներին:

Տեղին է հիշել մեծն գորավար Գարեգին Նժդեհի հերոսյալ խոսքերը.

«Նոզևոր միութիւնը խախտուած հասարակութեան մէջ անհապը, անհաղորդ ցեղին, իր ազգային ընդհանրութեան, ճանաչում է մի հատիկ իրականութիւն միայն - նիթականը, ժխտում ամեն կարգի գերագույն արժէք եւ բարոյական պարասխանատրութիւն: Նման հասարակութեան մէջ բարոյապէս հրէշանում է անհապը եւ դառնում գործակալը իր ազգին սպառնացող վարասերումների եւ մահուան:

¹ Նույն փեղը, Ե.182.

Ուշի ուշով դիպե՛ք նման ազգերի կեանքը եւ պիտի տեսնե՛ք, որ այդ դժբախտներին ամեն բանից առաջ պակասում է մի մեծ առաջնորդող գաղափար, մի մահացու պակաս, որի դեպքում բազում երկրորդական պարագիծային գաղափարներ շարունակում են ծնել այդ ազգերի հոգևոր կորուվր, նրանց ոյժերը: Այդ երկրներում իշխում են միջակութիւնը, րզիպանքն ու նախանձը - բռնակալութիւններից ամենակործանարարն ու ամօթալին»¹:

Նանրագումարենք: Քաղաքական զարգացման նման ուղղվածություն ենթադրող իրականությունում Նայաստանի աշխարհաքաղաքական հզորացման գրավականը պետք է լինի ոչ միայն նրա տնտեսական զարգացումն ու ռազմաքաղաքական կայուն առաջընթացը, այլև իր հոգևոր փորձի առանձնահատկությունը, հազարամյակների մշակույթի հսկայական ներուժը: Նենց հոգևոր-մշակութային համակարգի այս շերտն է ապահովում արժեքների փոխանցումը սերնդեսերունդ, ամրագրում ու պահպանում ազգային լեզուն, ազգային մշակութին համապատասխանող աշխարհի պատկերը, կարարում սերունդների ազգային ինքնագիտակցության ու մշակութային ինքնանույնականացման գործառնությունը, ուղենշում կյանքի իղեպներն ու արժեքները և, վերջապես, նպաստում հասարակական համերաշխությանն ու մարդկային հանրությունների համախմբմանը:

¹ Մի զինուորի ճշմարտութիւնները // *Գ. Նժդեհ* Մեծ գաղափար (նորահայր նյութեր): Եր., 2002, էջ 112:

STEPAN STEPANYAN.

*Assistant of the Political Science Department,
Public Administration Academy
of the Republic of Armenia*

ON THE PROBLEMS OF INTELLECTUAL SECURITY

In the article the author considers problems of national intellectual security. The importance of the topic caused by the increasing role of manipulation in different spheres of public life which allows manipulators to direct people's behaviour in requested way.

The author considers also the challenges of liberalisation and esternization for national cultures in the post-modern age.

Խմբագիր՝	ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ
Նամակարգչային շարվածքը և ձևավորումը՝	ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ
Սրբագրիչ՝	ԱՆԱՆԻՏ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝	ԱՍՅԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Տպագրությունը օֆսեթ, չափերը՝ 68x100, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 300, հրատ. մամուլը՝ 8:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը
(հասցեն՝ Երևան, Արշակունյանց 2)